

Հիւանդութեան ատեն ու ետքը 15 կամ 45 թ ու թը օր սաստիկ զգուշանալու է պաղէն ու խոնաւութենէ . ապա թէ ոչ հիւանդութիւնը կը կրկնէ աւելի սաստիկ կերպով :

Յանկարծական պաղիւ մը , արտաշնչութեան յանկարծակի կտրուիլը կրնայ ջրգողութիւն պատճառել :

Եւ հիւանդութեան մէջ ամէն բանէ առաջ պէտք է ներսի տաքութիւնը դուրս քաշել ու մարմինը տաք պահել , ուստի պէտք է հիւանդը տաք ջրի ու գոլորշիքի մէջ դնել , և թեթեւ ու մեղմացնող անոյշ ըմպելիներ խմցնել , բայց միշտ տաք :

Դ . Փողպատ . — Փողպատին պատճառն է բերնի ետեւի կողմի շնչափողին ու մեծ շնչերակին տաքութիւնը : Հիւանդը կը գանգատի որ կոկորդը սաստիկ կը ցաւի , բան մը չկրնար կլել , դժուարաւ շունչ կ'առնէ ու կարծէ թէ պիտի խղզուի :

Թէ որ բորբոքումը չմեղմանայ , կոկորդին ներսի կողմը կը բշտի կ'ուռի , և մէյմը որ սկսի թարախ կապել՝ թէ որ ինքիրեն չծակի , մէկ կողմը ծակելով թարախը որ վազցուի , մէկէն հիւանդութիւնը կ'անցնի : Եւ չհակառակն թէ որ թարախը չկարենայ վազել , բորբոքումը կը տարածուի , ծակերը կը գոցուին ու հիւանդը կրնայ խղզուիլ : Եւսպիսի բորբոքման պատճառներն են չափէ դուրս պաղ օդ առնելը , տաքցած ատեն սառու ըմպելիներ խմելը , կոկորդին մէջ օտար բան մը խրիլը , սաստիկ պոռալը , երգելը , ու երկայն ատեն բարձրաձայն կարգալը : Եւ կոկորդի բորբոքումը կրնայ կուրծքի հիւանդութեան ալ զարնել :

Եւ հիւանդութիւնը շատ կ'ունենան դիւրագրգիռ մարդիկ ան եղանակներուն մէջ որ օդը փոփոխական է , և ան երկիրները ուր որ օդը յանկարծ մէյմը տաք , մէյմը չոր ու մէյմը խոնաւ կ'ընէ .

նոյնպէս նաեւ ձմեռ ատեն ու լեռներու ծայրերը , ուր որ շարունակ պաղ օդ կը զարնէ կոկորդին , ինչպէս նաեւ ցած ու խոնաւ տեղեր :

Թէ որ փողպատը սաստիկ չէ , գինիէ ու հր և իցէ գրգռող ըմպելիներէ պէտք է զգուշանալ , անոնց տեղը կա . կըղցնող ու թանձր ըմպելիներ խմելու է , անով կ'անցնի : Եւ , թէ որ սկսի ծանրանալ , պէտք է պահեցողութիւն ընել ու արիւն առնել : Եւ ատ անգամ ընդհանուր արիւն առնել մը չբաւեր , հարկ է նոյն տեղէն առնել . ուստի ան ատեն պէտք է տասնը հինգ կամ քսան տգրուկ կպցնել վզին վարի կողմը անրակին վրայ ու կուրծքին վերի դին : Տգրուկները իյնալուն պէս , պէտք է ծակերուն վրայ թեթեւ , գաղջ ու կա . կըղցնող սպեղանի՝ դնել , որ չափաւոր տաքութեամբ արեան վազելուն կ'օգնէ , ու տաքութիւնը կ'անցնէ :

Թէ որ բորբոքումը կոկորդին նշան խոյլերուն վրան է , թէ որ խոյլերը սկսին բշտիլ և կամ այնչափ ուռին որ ինչուան խղզելու վախ տան , ան ատեն պէտք է վիրաբուժական գործողութիւն մէկ տեղ մը ծակել որ թարախը վազէ և կամ ուռած կտորները կտրելու է :

Եւ մենէն աւելի այսպիսի հիւանդութեանց մէջ պէտք է մաքուր օդ ծծել ու ապականեալ օդէն վախնալ , որ կըրնայ երբեմն ինչուան քաղցկեղ կամ կերցաւ պատճառել :

Որ և իցէ մարդու իր ձախորդութեանց վրայ խօսք մի բանար թէ որ կամք չունիս ու չես կրնար իրեն օգնելու ապա թէ ոչ անխոհեմութիւն է իր կամացը դէմ խօսք բանալով՝ զինքը անհանգիստ ընել :

Քաղախը քանի թունաւ (Բար) ըլի , իր ամանը կը շաքարցնի :

Քօռի (Խոյ) ինչ վէճն (Կո) այ թէ մումը թանկ այ :